Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Ծրագիր՝ Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում

Ու՞մ համար է օգտակար

- Բանտարկյալների, ովքեր կստանան բարելավված բուժօգնություն
- Քրեակատարողական հիմնարկների բժշկական և ոչ բժշկական անձնակազմի
- Նախարարությունների և բանտային առողջապահության համար պատասխանատու գերատեսչությունների

Ծրագրի նպատակները

- Բարելավել Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում առողջապահության իրավական/ինստիտուցիոնալ շրջանակը (այդ թվում՝ օրենսդրական հիմքերը և բանտերում բուժօգնության տրամադրման ներկայիս մոդելը):
- Բարելավել քրեակատարողական հիմնարկների բուժմասերի նյութական պայմանները՝ հատուկ ուշադրություն դարձնելով Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) զեկույցներում որպես առավել խնդրահարույց առանձնացված քրեակատարողական հիմնարկներին:
- Ամրապնդել բուժօգնության տրամադրումը, հատկապես՝ դատապարտյալներին հոգեկան (հոգեբուժական) բուժօգնություն տրամադրելու կարողությունները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների անձնակազմի ընդհանուր գիտելիքները քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող բուժօգնության, բժշկական էթիկայի նորմերի և մարդու իրավունքների հարցերում եվրոպական չափանիշների վերաբերյալ:

Ինչպե՞ս է գործելու ծրագիրը

- Ծրագիրն իրականացվելու է Արդարադատության նախարարության (Քրեակատարողական վարչության) հետ սերտ համագործակցությամբ և մասնակցությամբ.
- Լայնորեն կներգրավվեն նաև տեղական գործընկերներ և շահառուներ, որոնք կնպաստեն Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում առողջապահության ընդհանուր բարելավմանը, ինչպես, օրինակ,

Ծրագրային գործողությունները

- Հայաստանում բանտային առողջապահության վերաբերյալ կարիքների գնահատման առաքելություն և կարիքների գնահատման զեկույց.
- Բանտային առողջապահության ոլորտում օրենսդրության (այդ թվում՝ ենթաօրենսդրական ակտերի) վերանայում.
- Բուժսարքավորումների ձեռքբերում Հայաստանի բանտային համակարգի 11 բուժկետերի համար.
- Բանտերում առողջապահական պրոֆիլակտիկայի և առողջապահության

Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

Ծրագիր՝ Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում

Առողջապահության նախարարությունը, Գլխավոր դատախազությունը, Օմբուդսմենը և Ազգային կանխարգելիչ մեխանիզմը, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, կրթական հաստատություններ.

- Կկիրառվի համապարփակ և բազմակողմանի մոտեցում, այդ թվում՝ օրենսդրության վերանայում, հմտությունների ձևավորմանն ուղղված միջոցառումներ, տեխնիկական փորձագիտական աջակցություն, ինչպես նաև անհրաժեշտ սարքերի և գործիքների ձեռքբերում:

ամրապնդմանն ուղղված գործողությունների և բանտի անձնակազմի բժշկական էթիկայի վերաբերյալ ուսումնական մոդուլների (ծրագրի) մշակում.

- Վերապատրաստման դասընթացների շարք բանտերում առողջապահական պրոֆիլակտիկայի և առողջապահության ամրապնդմանն ուղղված գործողությունների և բանտի բժշկական և ոչ բժշկական անձնակազմի բժշկական էթիկայի վերաբերյալ:

Ի՞նչ կարժենա

- Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 900 000 եվրո

Ծրագրի տևողությունը

- Ծրագիրը կիրականացվի 2015 թ. մարտի 1-ից մինչև 2017 թ. փետրվարի 28-ը:
- Ծրագիրը մեկնարկել 2015 թ. հունիսի 2-ին:

Ո՞վ է պատասխանատու ծրագրի համար

Ծրագիրն իրականացվում է Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի կողմից

Լրացուցիչ տեղեկությունների համար

- Արման Պողոսյան, Ծրագրի ղեկավար

Arman.Poghosyan@coe.int

2014 թվականի ապրիլի 1-ին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնեցին, որ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ նպատակաուղղված համագործակցային աշխատանքներ կտարվեն ,Ծրագրային համագործակցության կառուցակարգի (ԾՀԿ) ներքո:

Այս համագործակցային աշխատանքների միջոցով կհզորացվեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները ներպետական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ: Բացառությամբ Բելառուսի, այս երկրները Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, և կիրականացվի եվրոպական ստանդարտներին դրանց մերձեցումը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության ոլորտներում:

ԾՀԿ ընդհանուր բյուջեն 2015-2017 թվականների համար կազմում է 33.8 միլիոն եվրո:

http://eap-pcf-eu.coe.int